ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

03. 06. 2022թ.

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՒ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 125-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Ազգային ժողովի աշխատակարգի 87-րդ կետի դրույթներով հանձնաժողովը ՈՐՈՇՈՒՄ է.

1. 2022 թվականի հունիսի 8-ին՝ ժամը 11:00-ին Ազգային ժողովի նիստերի դահլիճում հրավիրել խորհրդարանական լսումներ, որի թեման է. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի քննարկում»:

2. Հաստատել խորհրդարանական լսումների ընթացակարգը՝ համաձայն հավելված 1-ի:

Հանձնաժողովի նախագահ **Վ. Ղալումյան**

Հավելված 1
«Խորհրդարանական լսումներ հրավիրելու մասին»
ՀՀ Ազգային ժողովի Տարածքային կառավարման,
տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ
շրջակա միջավայրի պահպանության հարցերի
մշտական հանձնաժողովի որոշման

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԹԵՄԱՆ	«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի Կ-275-26.05.2022-ՏՏԳՇ-011/0 քննարկում»
ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ	ք. Երևան, Բաղրամյան 19, Ազգային ժողովի նիստերի դահլիճ
ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ	2022 թ. հունիս 8՝ ժամը 11:00
11:10 -11:20	Բացման խոսք՝ հանձնաժողովի նախագահ Վահե Ղալումյան
11:20-11:40	Օրենքի նախագծերի փաթեթի հիմնական դրույթների ներկայացում՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցիչ
11:40-12:40	Հարցեր զեկուցողին
13:00-13:30	Ընդմիջում
13:30-15:00	Ելույթներ (3 րոպեանոց)
15:00-15:20	Եզրափակիչ ելույթ՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցիչ
15:20-15:30	Ամփոփում՝ հանձնաժողովի նախագահ Վահե Ղալումյան

Լսումները նախագահում է ՀՀ Ազգային ժողովի Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վահե Ղալումյան:

Հարցերի և ելույթների համար հերթագրումն իրականացվում է հարց տվողի կամ ելույթ ունեցողի անունը, ազգանունը և կազմակերպության անվանումը հանձնաժողովի փորձագետներին տեղեկացնելով (հերթագրվելով):

Հարցերին կարող են պատասխանել նաև հիմնական զեկուցողի հրավիրած անձինք:

Սույն ընթացակարգով նախատեսված ժամկետները կարող են փոփոխվել լսումները վարողի կողմից: